ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ 1

Երկիր՝	Հայաստանի Հանրապետություն
Ծրագրի անվանումը՝	«Հայաստանի դիմակայուն լանդշաֆտներ» դրամաշնորհային, ծրագիր
Պայմանագրի անվանումը՝	Լոռի մարզում անտառների վերականգնման աշխատանքներ
Ծրագիր No.:	P179988
ՀՆՀ No.՝	AM-EPIU-516211-CW-RFB

Հարգելի հավանական հայտատու(ներ),

Տեղեկացնում ենք, որ ընթացիկ մրցութային գործընթացի շրջանակում ստացել են պարզաբանման հարցումներ հավանական հայտատուներից: Վերոնշյալ հարցումների կապակցությամբ պատրաստվել են համապատասխան պարզաբանումներ (պատասխաններ):

Ստորև ներկայացվում է բարձրացված հարցերը՝ համապատասխան պատասխաններով.

No	ՀԱՐՑՈՒՄ	ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ
1.	Բաժին 1 -Ի Դ ենթակետի 21 -րդ կետում նշված է .« Հայտատուն Հայտը պետք է առաքի առանձին կնքված ծրարով (մեկ ծրարով մրցութային ընթացակարգ): Հայտատուն մեկ առանձին ծրարում պետք է տեղադրի հետևյալ առանձին կնքված ծրարները՝ (ա) որպես **«ԲՆՕՐԻՆԱԿ »** նշված ծրարում՝ Հայտի կազմի մեջ մտնող բոլոր փաստաթղթերը, ինչպես նկարագրված է ՀՀ -ի 11-րդ կետում, (բ) որպես **«ՊԱՏՃԵՆ »** նշված ծրարում՝ Հայտի բոլոր պահանջվող պատճենները ... », իսկ հայտերի ներկայացման հրավերի 5 -րդ կետում նշված է «Հայտերը պետք է ներկայացվեն ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով ոչ ուշ, քան 2026 թվականի ապրիլի 16 -ը՝ ժամը 12:00 -ը: Էլեկտրոնային գնումների համակարգը չի ընդունում վերջնաժամկետից հետո ներկայացված հայտերը: » Խնդրում ենք պարզաբանել հայտերը պետք է ներկայացվեն համակարգի միջոցով, թե՞ թղթային տարբերակով և թղթային	Տեղեկացնում ենք Ձեզ, որ տվյալ գնումը իրականացվում է Համաշխարհային բանկի գնումների կանոնակարգերի համաձայն: Մրցութային փաստաթղթի Բաժին II «Հատուկ տվյալներ»-ով սահմանված դրույթները լրացնում, փոփոխում կամ գերակայում են Բաժին I «Հրահանգներ հայտատուներին (ՀՀ)» բաժնի համապատասխան դրույթներին: Հակասությունների դեպքում գերակայում են Բաժին II-ի դրույթները: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մրցութային փաստաթղթի Բաժին II-ի համաձայն ՀՀ 21-րդ կետը «կիրառելի չէ»: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ նույն բաժնի ՀՀ 22.1 կետի համաձայն՝ «Հայտերը պետք է ներկայացվեն բացառապես էլեկտրոնային եղանակով՝ ARMEPS (www.armeps.am) էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով: Այլ եղանակով ներկայացված հայտերը չեն ընդունվում»:

	տարբերակով ներկայացված հայտերը դիտարկման ենթակա են թե՞ ոչ:	
2.	Ֆինանսական կարողություններ բաժնի պահանջներից է հանդիսանում «(i) Հայտատուն պետք է ցույց տա, որ ունի կամ իր համար մատչելի են իրացվելի ակտիվներ, չգրավադրված անշարժ գույք, վարկային գծեր և այլ ֆինանսական միջոցներ (անկախ պայմանագրային կանխավճարից), որոնք բավարար են շինարարության ժամանակ դրամական միջոցների հոսքի կարիքները բավարարելու համար, որոնք տվյալ պայմանագրի համար կազմում են 60 000 000 ՀՀ դրամ առանց մրցույթի մասնակցի այլ պարտավորությունների»: Խնդրում ենք պարզաբանել գնման իրավունքի վկայականը, որը պայմանավորված է անշարժ գույքի հանձնմամբ մայիս 2026 թվական կիրառելի է թե՞ ոչ և եթե ոչ, ինչու՞:	Համաձայն Մրցութային փաստաթղթի Բաժին III-ի, ենթակետ 3.1 «Ֆինանսական կարողություններ» պահանջների՝ հայտատուն պետք է ներկայացնի ֆինանսական աղբյուրների փաստաթղթային հիմնավորումներ, որոնք պետք է հավաստեն, որ հայտատուն ունի կամ իր համար մատչելի են բավարար ֆինանսական միջոցներ՝ պայմանագրի կատարման ընթացքում դրամական միջոցների հոսքի ապահովման համար: Նման հիմնավորումները կարող են ներառել, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝ - բանկային հաշվի/հաշիվների քաղվածքներ, - բանկի կողմից տրամադրված հավաստումներ վարկային գծերի կամ ֆինանսավորման հասանելիության վերաբերյալ, - տեղեկանք հայտատուից՝ ստորագրված ընկերության ղեկավարի և գլխավոր հաշվապահի կողմից, - ինչպես նաև այլ փաստաթղթեր, որոնք հաստատում են իրացվելի ակտիվների կամ այլ հասանելի ֆինանսական միջոցների առկայությունը: Ներկայացվող ֆինանսական միջոցները պետք է՝ (i) լինեն իրացվելի կամ հասանելի կարճ ժամկետում, (ii) չլինեն ծանրաբեռնված այլ պայմանագրային պարտավորություններով, (iii) չգտնվեն արգելանքի տակ կամ այլ իրավական սահմանափակումների ներքո, և (iv) կարողանան ապահովել պայմանագրի կատարման ընթացքում անհրաժեշտ դրամական հոսքերը:
3.	Շինարարական աշխատանքների տարեկան շրջանառություն բաժնում պահանջվում է «Շինարարական աշխատանքների նվազագույն տարեկան շրջանառությունը պետք է կազմի 400,000,000 ՀՀ դրամ հաշվարկած որպես վերջին երեք տարիներից (2023 -2025) որևէ մեկում ընթացիկ և/կամ ավարտված պայմանագրերով ստացված վճարումների վկայագրերի ընդհանուր գումար: Որից	Համաձայն Մրցութային փաստաթղթի Բաժին III-ի «Շինարարական աշխատանքների տարեկան շրջանառություն» պահանջի՝ համատեղ ձեռնարկության դեպքում պահանջը պետք է բավարարվի ինչպես ընդհանուր, այնպես էլ յուրաքանչյուր մասնակցի նկատմամբ սահմանված նվազագույն մասնաբաժինների մասով:

	համատեղ ձեռնարկության դեպքում մեկ անդամ պետք է բավարարի պահանջի 60 %-ը՝ 240,000,000 ՀՀ դրամ , մյուսները՝ 4 0 % -ը՝ 160,000,000 ՀՀ դրամ :» Խնդրում ենք պարզաբանել, եթե համատեղ ձեռնարկության երկու անդամների շրջանառությունը բավարարում է, անգամ ավել է 400,000,000 ՀՀ դրամ ից, սակայն մեկ մասնակցի չափը 130,000,000 -ից 135,000,000 ՀՀ դրամի չափ է , կետի պահանջը համարվելու՞ է բավարարված:	
4.	Տեխնիկական պահանջներ ցանկապատի կառուցման համար բաժնում նշված է, որ անհրաժեշտ է կիրառել փայտե սյուներ 1,8մ բարձրությամբ, որոնք ուղղակի ամրացվում են հողի մեջ 0,5մ խորությամբ՝ մշակվելով հականեխիչ նյութով, հետևաբար հիմքերի բետոնացման աշխատանքներ չեն պահանջվում: Խնդրում ենք պարզաբանել ի սկզբանե առանց բետոնացման, ցածր ամրությամբ կառուցվող ցանկապատի ավերման կամ կենդանիների հրումից քանդման դեպքում, Կատարողն աշխատանքը պատշաճ կատարելուց հետո, ոչ իր մեղքով առաջացած նշված քանդվածքները պե՞տք է վերականգնի, և եթե այո, ապա Պատվիրատուն լրացուցիչ վճարում պատրաստ է՞ իրականացնել:	Կապալառուն պատասխանատվություն է կրում բացառապես իր կողմից իրականացված աշխատանքների որակի և տեխնիկական պահանջներին համապատասխանության համար: Այն դեպքերում, երբ ցանկապատը կառուցված է տեխնիկական առաջադրանքով սահմանված պահանջներին համապատասխան (ներառյալ՝ սյուների խորությունը, տեղադրման եղանակը և համապատասխան մշակումը), սակայն հետագայում վնասվում կամ քանդվում է արտաքին ազդեցությունների հետևանքով (օրինակ՝ կենդանիների հրում, բնական գործոններ և այլն), այդ վնասների համար Կապալառուն պատասխանատվություն չի կրում եթե պահպանվել է տեխնիկական պահանջները:
5.	Դարպասը բաղկացած է լինելու երկու փեղկերից, որոնք բացվում են ներս կամ դուրս՝ ապահովելով լայն անցուղի: - Բարձրությունը պետք է համապատասխանի ցանկապատի բարձրությանը (մոտ 1.8 մ), իսկ լայնությունը՝ 2.5 –3 մ:» Նշված չէ, թե՞ դարպասներն ինչին պետք է ամրանան , եթե ցանկապատի պես փայտյա սյուների՝ առանց բետոնացման, ապա դարպասների ծանրությունը հավանաբար չեն դիմանա և արագ փլուզում տեղի կունենա: Խնդրում եմ պարզաբանել դարպասներն ամրանալու են փայտե սյուներին թե՞ անհրաժեշտ է կիրառել ինժեներական կոնստրուկցիա՝ անհրաժեշտ ամրությունն ապահովելու համար: Եթե առանց բետոնացման պետք է տեղադրվի , ապա քանդման դեպքում, Կատարողն աշխատանքը պատշաճ կատարելուց հետո, ոչ իր մեղքով առաջացած նշված քանդվածքները պե՞տք է	Դարպասների կառուցումը պետք է իրականացվի այնպես, որ ապահովվի դրանց կայունությունը և շահագործման հուսալիությունը՝ հաշվի առնելով դարպասների չափերը (լայնությունը, բարձրությունը) և ընդհանուր ծանրաբեռնվածությունը: Միևնույն ժամանակ, տեխնիկական պահանջներով նախատեսված է, որ բետոնացման աշխատանքներ չեն իրականացվում, և այդ պահանջը ենթակա չէ փոփոխման: Հետևաբար, Կապալառուն պարտավոր է առաջարկել և կիրառել համապատասխան ինժեներական լուծումներ (ներառյալ՝ սյուների ընտրությունը, ամրացման եղանակները, լրացուցիչ հենարանների կամ ուժեղացումների կիրառումը), որոնք կապահովեն դարպասների բնականոն և անվտանգ շահագործումը առանց բետոնացման: Դարպասների ամրացումը պետք է իրականացվի փայտե սյուներին կոնստրուկտիվ լուծումների միջոցով՝ պայմանով, որ ապահովվում է պահանջվող ամրությունը և կայունությունը:

	վերականգնի, և եթե այո, ապա Պատվիրատուն լրացուցիչ վճարում պատրաստ է՞ իրականացնել:	Կապալառուն պատասխանատվություն է կրում իր կողմից առաջարկված և իրականացված տեխնիկական լուծումների արդյունավետության և կատարված աշխատանքների որակի համար: Այն դեպքերում, երբ աշխատանքները կատարված են տեխնիկական պահանջներին համապատասխան, սակայն հետագայում առաջացած վնասները պայմանավորված են արտաքին ազդեցություններով (օրինակ՝ կենդանիների ազդեցություն, եղանակային պայմաններ և այլն), Կապալառուն պատասխանատվություն չի կրում:
6.	Նկատի ունենալով, որ հայտի բազմաթիվ հատվածներում առկա է «շինարարական աշխատանքներ» բառակապակցությունն և աշխատանքների մեջ առկա է ցանկապատման և դարպասների տեղադրման աշխատանքներ, խնդրում եմ պարզաբանել Կապալառուն պե՞տք է ներկայացնի շինարարության իրականացման լիցենզիա բնակելի, հասարակական, արտադրական ներդիրով:	Ըստ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի և քաղաքաշինության բնագավառում գործող կարգավորումների՝ ցանկապատման և դարպասների տեղադրման աշխատանքները չեն դասվում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների մեջ, հետևաբար Կապալառուն պարտավոր չէ ներկայացնել շինարարության իրականացման լիցենզիա բնակելի, հասարակական կամ արտադրական ներդիրով: Օրենսդրական հիմքեր **«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք** Հոդված 43 – սահմանում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկը. ՀՀ քաղաքաշինության ոլորտի լիցենզավորման կարգ Հետևաբար, հայտում «շինարարական աշխատանքներ» ձևակերպման առկայությունը ինքնին չի առաջացնում լիցենզիայի պահանջ, եթե կոնկրետ աշխատանքները չեն դասվում օրենքով սահմանված ցանկում:
7.	Կենսունակություն և պահպանման ամփոփում (կետ 3) նշված է «Կենսունակության մակարդակ ՝ սահմանված շեմից (≥ 75%) ոչ պակաս:» Խնդրում եմ պարզաբանել, նկատի ունենալով, որ աշխատանքներն ունեն նաև հետագա երկու տարվա համար որոշակի բաղադրիչներ, կարելի՞ է հասկանալ, որ դիցուք առաջին տարում ՝ 2026 թվականի աշնանը տնկված տնկիների համար 24 % ոչ կենսունակ (կպչողականության և այլ օբյեկտիվ	Տնկման աշխատանքները պետք է իրականացվեն 100% ծավալով՝ համաձայն պայմանագրով սահմանված քանակների և պահանջների: Հետագա մոնիթորինգի արդյունքում արձանագրված ոչ կենսունակ տնկիների դեպքում Կապալառուն պարտավոր է իրականացնել լրացման աշխատանքներ այն ծավալով, որը կվերականգնի ընդհանուր տնկված քանակը մինչև 100%: Նույն մոտեցումը կիրառվում է յուրաքանչյուր հաջորդ տարվա ընթացքում՝ ապահովելով, որ տնկված տնկիների ընդհանուր

	պատճառներ ով) տնկիների համար հաջորդող տարվա ընթացքում լրացման աշխատանքներ չեն պահանջվի: Ենթադրենք 2026 թվականի ընթացքում նախատեսված ողջ տնկանյութը տնկվել է, իսկ 2027 թվականի մոնիթորինգի արդյունքում պարզվել է, որ ընդհանուրից 34 %-ը կենսունակ չէ, այս դեպքում անհրաժեշտ է՞ լրացում կատարել 10%-ի չափով, քանի որ մինչև 24 % ոչ կենսունակ մակարդակը համարվում է ընդունելի:	քանակը մշտապես համապատասխանի պայմանագրով նախատեսված ամբողջ ծավալին: Միևնույն ժամանակ, ծրագրի ավարտին կամ գնահատման համապատասխան փուլում տնկիների ընդհանուր կենսունակության մակարդակը չպետք է լինի 75%-ից պակաս: Այսինքն՝ 75% շեմը վերաբերում է վերջնական (կամ սահմանված գնահատման պահի) կենսունակության ցուցանիշին և չի ազատում Կապալառուին լրացման պարտավորությունից՝ նախորդ փուլերում արձանագրված կորուստների դեպքում:
8.	Քանի որ ՀՀ օրենսդրության համաձայն Անտառային հողերում որոշակի աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ է ՇՄԱԳ եզրակացություն, խնդրում եմ պարզաբանել եզրակացությունը առկա՞ է, հաղթող կազմակերպությունը կարող է անմիջապես սկսել աշխատանքները թե՞ անհրաժեշտ է սպասել մինչև եզրակացության լինելը:	Տեխնիկական առաջադրանքով նախատեսված աշխատանքների շրջանակում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) փորձաքննության անցկացում չի պահանջվում՝ համաձայն գործող կարգավորումների: Միևնույն ժամանակ, եթե աշխատանքների իրականացման ընթացքում կամ կոնկրետ տեղամասերի առանձնահատկություններով պայմանավորված առաջանա անհրաժեշտություն ՇՄԱԳ ընթացակարգ անցնելու, ապա այն պետք է իրականացվի սահմանված կարգով՝ մինչև համապատասխան աշխատանքների մեկնարկը: Հետևաբար, տվյալ փուլում հաղթող կազմակերպությունը կարող է սկսել աշխատանքները՝ առանց ՇՄԱԳ եզրակացության սպասելու, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու մարմինների կողմից սահմանվի նման պահանջ:

Հարգանքով՝
Արմեն Եսոյան
ԲԾԻԳ ՊՀ-ի տնօրեն
«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ»
պետական հիմնարկի (ԲԾԻԳ ՊՀ)
Հեռ.՝ +374 96 693 911